**Արձանագրություն N 2**
**ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/011 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան «25» Ապրիլի 2022թ.
ժ. 11:00

Մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Գալուստ Գալստյանը.
Անդամ՝ Ալինա Ավետիսյանը.
Քարտուղար՝ Արթուր Բաղալյանը:
Գնահատող հանձնաժողովի անդամ Զավեն Աղաջանյանը բացակայում էր նիստից:

## 1. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և գտնվելու վայրերի հասցեների մասին

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/011» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

| Մասնակցի անվանումը | Տվյալները |
|---|---|
| «ԴՈՔՍ ՔՈՄՊՅՈՒՏՐ» ՍՊԸ | ՀՎՀՀ՝ 04718853, հասցե՝ ք. Երևան, Պռոշյան 11/5, հեռ.: (077) 08-44-10 |
| «Բի Լայն» ՍՊԸ | ՀՎՀՀ՝ 02522096, հասցե՝ ք. Երևան, Խանջյան 50, հեռ.: (010) 57-88-25 |
| «ՊԵՏԳՆՈՒՄՆԵՐ» ՍՊԸ | ՀՎՀՀ՝ 01035542, հասցե՝ գայի 31, հեռ.: (095) 08-16-08 |

Ընդունվել է որոշում՝ կողմ - 2, դեմ – 0

## 2. Էլեկտրոնային աճուրդին ներկայացված հայտերի մասին

Գնահատող հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների պլանավորված գները՝ մեկ թվով արտահայտված, ինչպես նաև հայտ ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված:

| Չափաբաժնի համար | Գնվելիք ապրանքի | | Հայտ ներկայացրած մասնակցի | | |
|---|---|---|---|---|---|
| | անվանումը | Պլանավորված գինը /ՀՀ դրամ/ | անվանումը | գնային առաջարկը (առանց ԱԱՀ) | գնային առաջարկը (ներառյալ ԱԱՀ) |
| 1 | Սերվեր | 25,000,000 | «ԴՈՔՍ ՔՈՄՊՅՈՒՏՐ» ՍՊԸ | 19,676,250 | 23,611,500 |
| | | | «Բի Լայն» ՍՊԸ | 19,875,000 | 23,850,000 |
| | | | «ՊԵՏԳՆՈՒՄՆԵՐ» ՍՊԸ | 120,000,000 | 144,000,000 |

## 3. Տվյալներ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

«ԴՈՔՍ ՔՈՄՊՅՈՒՏՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում արձանագրվել է հետևյալ անհամապատասխանությունը՝

- «ԴՈՔՍ ՔՈՄՊՅՈՒՏՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում բացակայում է հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվող «Կրիչներ և RIAD կոնտրոլերներ» դաշտում նշված կրիչների վերաբերյալ տեղեկատվությունը:

Ընդունվել է որոշում՝
Կողմ - 2, դեմ՝ – 0

## 4. Գնահատող հանձնաժողովի որոշման մասին

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. Մեկ աշխատանքային օրով կասեցնել ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/011 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը,

2. Առաջարկել «ԴՈՔՍ ՔՈՄՊՅՈՒՏՐ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել վերոնշյալ անհամապատասխանությունը:

3. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն թվականի ապրիլի 27-ին ժամը 11:00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մ. Խորենացի 3 հասցեում:

4. Սույն որոշման հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/011 ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Արթուր Բաղալյանին.

Ընդունվել է որոշում.
Կողմ՝ 2, դեմ՝ 0

Գնահատող հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Գ. Գալստյան

գնահատող անդամ՝ _____ Ա. Ավետիսյան

քարտուղար՝ _____ Ա. Բաղալյան